



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կոռյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ԹԻՎ 9
ՀԵՌԱԿԱ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրությամբ,

Հիմք ընդունելով Համալսարանի բարձրագույն կրթության ուսանողների համար միատեսակ պայմաններով և հավասար իրավունքներով գիտելիքների ստուգման գործընթացը կազմակերպելու և արդյունքների կիրառումն ապահովելու անհրաժեշտությունը՝

Համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Համալսարանի բարձրագույն կրթության բոլոր ֆակուլտետների և կուրսերի ուսանողների 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի բոլոր առարկաների գիտելիքների ստուգման արդյունքները ձևակերպել **«Ստուգված»** կամ **«Չստուգված»** ձևաչափով (20-06-09-01):
2. Հաստատել մասնագիտական և շարունակական կրթության ծրագրերը (20-06-09-02) (կցվում են):

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ

